

V

Առ Վ.Տ. այ. Վաշնչուսուց
համբաւ ապրիլ 8 քաջարակից

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ն Ա Խ Ն Ե Ա Յ

Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ե Ց Կ

609
480

ԱՆԵՑԻ

ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԵՐԳԵԼԻԿ

ՎԱՍՆ ԿԱՌԱՑ

ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ

Կ 8 03

ՆԵՐԲՈՂ

ՀՐԱՄԱՆԱԳՐԻՑ

Հ. ԲԱՐՄԵԴ Վ. ՍԱՐԳՈՅԵԱՆ

ՅՈՒԽԱՏԵՆ ՄԻՒԹԱՐԱՑ



ՎԵՆԵՑԻԿ - Ա. ՂԱԶԱՐ

1919

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

Եզական գրուածիս հեղինակն պիոնի մթայր
յաւէտ անյայտ, եթէ նա ինքն նախահոգակ
իմաստութեամբ մտածած չըլլար լուշմելու,-
ծախակողմեամ լուսանցից վրայ իսկ,-իւրա-
քանչչիր տամ գլխատառերը, որոնք կը կազ-
մեմ խորագիր ամբողջ ացուցիչ մասն, այսպէս.
« Անեթի ՎԱՐԴԱՆԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐԳԵԼԻՆ »:
Հետաքրքրուեցայ, բնականապէս; զիտեալ և
եթէ կարելի է գտնել մեծախորհուրդ վարդա-
պետիս ժամանակն և անոր մասին ամդրագոյն
տեղեկութիւններ տոհմային պատմութեամ և
ժամանակագրաց քով, բայց ի զուր. զի Անեցի
վերադիր կրող Վարդամ վարդապետ մը ուրիշ
տեղ յիշուած չէ. Միայն յամի Տեառն 1307
Հեթում թագաւորի հրամանով ի Սիս գումա-
րուած ժողովական չարց մէջ յիշատակուած
է նաև Վարդան եպիսկոպոս Անոյ: Բայց
այս չի կրծար մոյնացուիլ Անեցոյն հետ,



քանի որ մանաւանդ այդ եպիսկոպոսին ոչ
զբող ըլլալի և ոչ ալ զրուած մը մեզի հա-
սած է երբէք։ Երկրորդ մերբողիս խորհրդա-
պաշտ ոճն և խրթիմ լեզում իսկ նարեկացոյ
դարում և դպրոցին աւելի յատուկ է քան
ժԴ.ին։ Բետևաբար Ամեցի վարդապետու ժ.
կամ ԺԱ. դարում ապրող մէկն ըլլալու է,
ըստ իս, ու քաջավարժ մեկնողական և քեր-
թողական արուեստին, գուցէ թէ և զրիշ ուրիշ
մեկնութեանց։

Գրուածս գէթ ինձի ծանօթ՝ միակ օրինակն
է, բարկացած վեց փոքրադիր թերթերէ, զոր
քազմահմուտ չ. Միք+ վարդապետն մեր Զամ-
չեան ընդօրինակած է – յամի Տեառն 1800 –
Կ. Պոլսոյ Փատրիարքարանի Զեռազիրերէն։
Զամչեան Ցկատելով բազզի ինչ ինչ սխա-
լազորթիւնները՝ ուլլազորած է զանոնք, Բշա-
նակելով ի ստորոտս իր ըմլորինակութեան՝
բնազրի տարբեր ընթերցուածներ ևս։

Ազգային բանասէներէն մէկը ծանօթանա-
լով գրուածիս՝ չ. Ղ. Ալիշանի հակիմն մէջ-
բերումէն, խմբած էր – տարիներ առաջ
– այս տողերը գրողէս, որ ամբողջապէս
օրինակելով իրեն լրկեմ։ Երկայն որո՞նում-
ներով հանդերձ՝ չյաջողեցաւ ինձ գտնել յայն-
ժամ, զի տեղէն հանուած և ուրիշ թուլթերու

կոյտին մէջ դրուած էր։ Քանի մ'օր յառաջ
դեռ զանոնք կարգաւորելու ատեն, առանձին
Տուփերու մէջ, եկաւ ի յայտ, զոր արդ կը
փութամ հրատարակել « Բազմավէպ » ին մէջ,
թուլով յիշեալ բանասիրին որ Ֆրանսէրէն
լեզուով ծանօթացնէ նաև Եւրոպացւոց։ Սա-
կայն կանուխէն ըսած ըլլամ, որ ոչ միայն
ինքն, այլ և կորովի մեկնիչք և աստուածա-
րանք իսկ գլուխին շատ պիտի յոգնեցնեն
վերահասու ըլլալու համար Ամեցի վարդա-
պետիս խորհրդապաշտ բառերում և բացա-
տրութեանց, որո՞նք՝ ըստ իս, վարկպարազի
գործածուած չեն, այլ խոր և խորհրդաւոր
նշանակութեանմք։

Եւ որովհնետև տասն դարերու շրջագայու-
թեամբ դեռ Յոր կու զայ Երեւանալ մեր գրա-
կանութեան հորիզոնինի վրայ, որ և կը կազմէ
նաև ուրոյն հեղինակութիւն մը. ուստի յար-
մար դատուեցաւ Բազմավէպէն զատ առանձին
եւս տպել զայն, ինչպէս Յախնեաց միս եր-
կերը, արտաքին ընթերցասիրաց ևս դիւրա-
մատչելի ըմելու համար։



Վ.Ա.Ս.Ն Կ.Ա.Ռ.Ա.Ց

Ա.Ս.Տ.Ո.Ւ Ա.Ծ.Ո.Ւ Թ.Ե.Ա.Ն

Ն.Ե.Ր.Բ.Ո.Դ.

Առ կառքդ աստուածութեանդ և լծա-
կիցքդ բառազիմանդ ի կենդանախարու-
կեալքդ միշտ, և ի վակասքդ արարածոց,
ի մշտահոլով և յանկէզ անիւքդ յարա-
բարդքդ, և ի կալքդ բնաւից երախայրեաց
ոստահատին կենդանութեան, երկրպագեմ
մշտածագ և շահաւէտ հովանոյդ ձերոյդ ե-
ղեալ առ իս զկաթդ կենդանարար՝ բու-
սուցանել յինչն զբոյս բանաւոր ի բարու-
նակիդ օրհնութիւնդ միշտ և յարաժամ:

Նուրբ և անքնին էութեանն ընդունակը,
և հայելիք երկատեսակը բազմաբորբոք-

ճառագայթիցն, մշտաթափք և սքանչեւալուր ճայնիւր գետք յորդառատք, զոր առ երամս հրեղինացն վասիք ծով մշտածաւալ ի յիմացուածս, և յանգոյսն գոյանաք, լինիք բարձող վեհին վառացն։ Զոր մաղթեմ առ քառարէմսդ՝ վառաւոր ներգործութեամբ և առ իս ձևանալ ձեր. զի եղայց բոլոր ի ձեւ սկզբնատպին միշտ և յարաժամ։

Երագընթացք և սրադարձք ի խոր և ի վեր. ստեղծագործող բանին՝ սուրբ լարք և ուռկանք ոսկետեսակք և բազմարարք. Կալով բոլոր գոյիւս ի ձեռն ինքնագոյին, որ ի վերայ ջուրցն միշտ շրջի, և յերկանուն և յանձնունդ ի մեծ ծովէն հանէ մարմին և շունչ ազգի ազգի. և զբնարեալսն առնէ վառակից ձերում դասիդ, և անեղն ի մարմնի եղանիւր, զոր մարդոյ նմանութեամբ ի ձէնջ բարձեալ վառաւորութեան¹ երկրպագի. Զոր կարդամս առ քառակերպարդ վասն բարձրելոյդ² ի ձէնջ սուրբ պատկերիդ, պահել անձին իմում զտիպս տէրունի միշտ և յարաժամ։

Յանկը բուրաստանին՝ որ ունի առ իւր

1. Հաւանօրէն՝ վառաշորոշեամբ։

2. Լաւ և՛ բարձելոյդ։

զծառն կենդանի զոսկեսաղարթն, և զուրտուղն համազգի. զոր ի սրորէիցն նուրբ պողոտայն ի մաքրեցելոյն այլ ոչ պահի. և որք ի քառարուխ յիմաստս ձեր մկրտի՝ ի բարունակէն արագահս պտղաբերի ժառանգ Աստուծոյ Հօր և Քրիստոսի ժառանգակից. Զոր և կենդանի և բանաւոր ոստովք մաղթեմ առ քառանունսդ, մուծանել զիս ի պարտէզդ աստուածայն և յօդիլ ի յոստն իմ հոմազգի, պտղաբերել զնա միշտ և յարաժամ։

(Առ Մարդկ). — Ի բազմադէմ և ի սրբազն ստեղծուածդ, և յընտանի իմոյ ձեռյս և բնութեան բանականիս, մարդդ բազմաթե, որ ունիս առ ձեռինդ զկշիռ զորդւոյ նոր Սիոնինի. և զօրութիւնդ և յիմաստութիւնդ որդւոց Աղամայ և բոլոր բանականացս, և նախկին գաղափարդ և ի կնիքդ անփոփոխ. ի ձուլարան դէմադ և ի թագլնկալ զլուխդ. ի յանտարակուսելի հանձարդ, յարգիւնաւոր և յանկարօտ բանականդ, ի յաստուածարանդ և ի վարդապետդ յիմանալեաց. փութայ անձն իմ հաղորդիլ ստորի բանիցդ և կենդանանալ ի խօս վասն էիդ. Զոր և համբուրելով զգարշապարդ հրափայլ՝ բանաւորեա առ լեզուս իմ միշտ և յարաժամ։

Վաղվագատես և փութալուր Այր հրա-
շց էին, զոր յերկուցեալ համայն էակցս.
զի անձնն զտիպդ էառ, արար զմարդն և
մարդացաւ, և ի ձեր քումդ պաշտեցաւ
Աստուած և Տէր ձերդ, բարոզեցաւ միակ
քո ձեղ. ի տպաւորեալսն բազմացաւ և փա-
ռաց Տեառն տաղանդ ի յանօթ խեցեղինացն
զանձեցաւ, զոլ կենդանի և մշտախոս ընա-
րաւորք և փողահարք ապազյիցն և ան-
ճառիցն ժուժ¹ ազգարար. Զոր առ քեզ
գոլով զմուտս ամենայն ձայնիցն և զելս
ընդ բնաւս, որովք երկրպագեմք և պա-
տափիմք՝ առ շնչառուչ փողդ ահաւոր՝
բանաւոր, զբնար բանիս իմոյ պահել կազմ,
և ձայնալի, խօսել առ տէրունիսն միշտ
և յարաժամ:

Առ հարսնարան փեսային՝ ոսկետեսակ
աշտանակ, և առ շնորհաբաշխութեանցն
հանդէս՝ լապտեր անկարօտ, և տունկ
ձիթենի մշտակացագոյն². զահեկան վարձու
և շահողաց քանըարացն զանձ անթուելի,
թագաւորեցելոցն թագաղիր և վիճակացն
կարապետ անմոլար, աստուածացելոցն
երպիւդ խոստովանօղ և աննախանձ եր-

1. Թերես՝ յոյժ:

2. Եւ կամ՝ մշտակաց այգոյն:

կըրպագու, և համբուրեալ օծելոյ և քա-
չանայական ձերդ վիճակ ճշմարիտ, և դպիր
անձանձիր՝ պատարագին վասն էին հաշ-
տութեանն, և բարեխօս անդադար, և կո-
ղահոս վտակին պատկառելին վարագոյր.
Զոր իբրև զտէրունի տանուաէր զնախա-
տիպ իմ աղաչեմ՝ առնել հաղորդս շնորհաց
միշտ և յարաժամ:

Բարունեացն և իմանալեացն դասուն՝
արուսեակ փայլմամբ իմաստիւք, և սար-
տուցելոյ սերովբէիցն զնդին և յասացե-
լոցն՝ դէտ լուսարեր, ի գագաթ կամարին
եղելոցն և պազայիցն՝ նշան հաւատալի,
և մելան ոսկի առ զրչին. զոր ձեռամբ
էին ընդհանուրքս աշխարհագրին պար-
տեաց մուրհակըն պատառին, և առ քար-
տէզ մարմին բանին՝ անուն նոր և սըան-
չելի փառօք անսուտ դաշամբն որդէզրին.
Զոր հանուր հարազատիւք կարգամք առ
հարազատ ձեղ՝ մնալ անջնջելի կենդա-
նագրին միշտ և յարաժամ:

Դատաստանի էին վկայ ճշմարիտ և դա-
տապարտելոյ զնդին հատանող սուր երկ-
սայրի. ճգնաց ճգնաւորացն՝ ասպարէզ
հանգիսի, և քաջապէս մըցողացն՝ պատկ
ոսկեհուռ. անկիրթ մըցողացն՝ վարդապետ

վարժական՝ և յապաշտարութիւն տկառացն՝ ջատագով յուսոյ և բարեխօս անպատկառ. ի հաշտութիւն հօր՝ զիրկ լայնաւարած, և յողջոյն կարօտելոցս՝ համբոյր սրբութեան. ի հաւատոյս մատանին՝ անջնջելի դրոշմ. մշտագին պարարակին արեանն՝ լի¹ ճամարտար. Զոր քնաւ մկրտելով աղաչեմք զսեռ ձեփդ իմ՝ ի համբոյր սիրոյդ պահել զիս միշտ և յարաժամ:

Անմարմին զուարթուն և անդադար երգեցիկ սիրեցելոյն. ի² մաստունս իմանաւեցն բերկրական բարբառ և աւետարեր տափդ. ի լեզուս պարուց աստեղացն՝ աղդեցութեանն զրոյց և զարթուցման ձայն յօդեալ. ի նուրբ շունչս հողմոց՝ բանական ծով, և պատրաստական նաւ՝ գոհար բեռամբը, և նաւահանգիստ ամենառատ. խօսուն բուրաստան, և ծաղիկ անթառամծածկեալ ի ծոց զշխուհւոյ մօր Սիրվի. հրաշարեր և կաթնաբուխ բանին ստինք՝ ի շրթունս աշակերտեցելոց երկնաւոր մատենագրին. Զոր բանիդ աշակերտելովքդ աղաչեմք զտիպ հարազատիդ, զի ջամ-

1. Ընթեռնի՝ մին կամ ի մին համատար:
2. Ի մատունքն:

բեսցես առ իս զկաթնդ բանական միշտ և յարաժամ:

(Յառիշճե).—Նկարեալ անուն և ահաւոր դէմ, յանձնապաստան և զարհուրելի բարբառ, հնազանդելոյ գումարիցն սանձք լոռութեանց, և փախուցելոց ապստամբիցն հնարաւոր. դարանակալ քինահատոյց և վրէժիննդիր բարք, և հեգնողացն զքէն անպատկառ դատավճիռ. անախտ խորհուրդ և կենցաղ առանձնասէր, բազմահնար և շառաւիդ անքննելի զքեզ քննողաց, անքուն ակն և զուարթուն աննընջելի, սրտից ոստիկան և քննող երիկամանց. որ զանարատովքն զանց առնես և ոչ երկիս սարսելի դիմօք և մահարար ճիրանով. Զոր և գգուելի և զողոքասէր զբարսդ աղաչեմ, լինել ինձ ախոյեան առ թշնամիսն իմ միշտ և յարաժամ:

Առ բազուկդ աջակողմեան՝ որ ունի առ իւր զվճիռ եօթնակնցեան. առ ինքնաճառ նամակդ և ի խոսդ¹ մանգալոյ բարբառոյ արքայիդ. առ բացումն երկնիցդ և յելս սպիտակ կառավարիդ, խոցով նետիւ մասուն մահարարիդ և մահացելոյս կենդա-

1. Խոստման գալոյ:

նատուիդ, երկրպագեմ իշխանաց իշխողիդ
և թագաւորադէմ սուրբ ձերդ, և՝ զթագ
ճշմարիտ հոմազգիս՝ պահեսցես յանձին
իմում՝ ահաւոր և պատկառելիսն իմ միշտ
և յարաժամ:

(ի յեսեն սուրբ). — Վրան՝ լայնատարած
թեօքդ, և խորան՝ ի վերայ անախտածին
կորեանցն առիւծուն. թեք ցօղալից և լու-
սալիր, ցանեալ ի կտակս իմանալեացն ի
հաւատ՝ զանքննելի ծագումն, բազմերանցն
և երկնագոյն տեսակ թեոցդ՝ զանախտա-
ծինսն և՛ երկնաթոփչս առնէ, և ի թեթե
ըո մշտաշարժ քաղցրասիդ շնչոյն իշեալ
ջահավառէր, և զարմանաւոր տնօրինեալսն
քառանկիւն ի մեր բնութիւնն թռեաւ թեօք
քառադիմիդ և զուրաճացաւ ի վերայ թեոց
հողմիդ. և որպէս զանգդն անզուգական՝
նստաւ ի կայան իւր բնական, յիւր ծանօթ
երամքն անդ խոյանան: Զոր հայցեմ առ
թագաւորական սուրբ ձերդ, ունել զիս ի
ներքոյ հովանոյդ, պահեսցես միշտ և
յարաժամ:

(ի յերեսն սուրբ). — Անքննելի դիմացն
և անձառելի կերպ և անհասանելի էու-
թեանն նկարագրեալ պատկեր ի քառա-
կուսէ, բնաւիցս եղելոցս օրհնութեանցն՝

քառադէմ ընկալուչ, և ի դաստիարակու-
թիւն եղելոցս՝ քառապատկեր մատակարար.
ի մեռեալսն՝ անախտ շնչովդ յարութիւն,
և անձնունդ մօր որդուցն՝ անախտածին ձնող
և որսասէր կորեանցն առիւծուց. ի մի ան-
ձինդ երեսը չորեքկուսի և բերանը արդարա-
դատք և օրէնք միիշխան արարչութեանցն,
փութավճիռ և հրաթափ լեզու յապստամ-
րիցն, և առ հնազանդուն՝ շրթունք լի կա-
թուածով մեղուի: Զոր և զերկիւզալի
զգէմսդ աղաչեմ՝ տեղալ առ իս զմանա-
նայդ երկնային միշտ և յարաժամ:

(ի ձեռսն սուրբ). — Բարուն իմանալի
մեքենայիցն՝ ձեռքդ չորս, որ ունի զէքմն
անկեան՝ և զհամատարած լարն վիճակի,
որով շարժէ զճախարակ ըրափ, և մա-
տամբքն ոսկի յօրինէ զպարս աստեղացն.
որով հիւսէ զծիրանին և զերկնագոյնն
վասն անխախուտ և խօսուն խորանին,
սկզբնատպին և անփոփոխ օրինադրին,
որ և շարժէ զտապանակ ինքնաշարժին.
յորոյ ձեռինն բնաւ էակըս ի կախ պահին,
կապեալըն լուծանին, և գառանցն հօտքն
մակաղին ի մէջօրէի առ լեռամբռն, յորում



Քարկոծին զլացեալքն։ Զոր և մաղթեմ
զենմամբ գառանցդ, զի առ շինուած սրբոյ
խորանիդ պահեսցես զիս միշտ և յարա-
ժամ։

(Ի յոտսն սուրբ)։ — Դու քաւարան ա-
մենեցուն, և անկայարան գարշապար հսկայ
սուրհամնդակի՝ յոգիս և յերամս զօրու բո-
ցեղինացն, և մուտք անդուռն ի շաւիդս
աստեղացն, գեղեցիկ ճեմասէր, և առ նշոյլս
արեգականն՝ ճաճանչ թափանցիկ։ ի ջուրս
ծովու՝ անհետազօտելի լողակ, և ի կար-
թելն զվիշապն՝ հմուտ որսորդ, և մանուկ
խաղասէր։ ի յղութիւն ամլոյն՝ սաղմն
սուրբ, և ի ծնունդն վկայեալ կնիք և զրոշմ
անարատ գերեզմանին, հատ ցորենոյ և
ի բերումն արդեանցն և առ մուտսն ի վեր-
նատունն և յիմանալիսն անկարօտ բանա-
լեաց։ Զոր և զգարշապար զերկնակոխ
սուրբ արցայիդ համբուրեմ, պահել զիս
ի սրահ սրբութեանդ միշտ և յարաժամ։

(Առ եզն սուրբ և ի կեհիք եմին ի Յիսոս
Քրիստոս Տէրն)։ — Առ գործունեայ եր-
կնաւոր հովտին և ի շարս քերովքէցն
ւծոյն, և ի յամուդ ընտիր. առ բարդութիւն
որայի. և հասկին. ի ցնծաբեր որոճդ, և
ի յիշումն կենաց հացին. ի հաշտարար

զուարակդ, ի շարժումն սայլի¹ աստեղացն։
ի յառաջընթաց եզնդ, և առ կատարումն
տարւոյն յուսացուցանող երկրավաստակդ։
ի վերայ կոհակաց ծովուն ի յակօսապա-
տառ ձեղ, և յուռկանոյ ժողովելոցն ի
համբարանդ բարեբարձ. ի բուրաստանս
ծաղկոցաց ի շնչալի արածողդ, և առ
նազելի լուռեթիւնդ իսկ խոկասէր և յի-
մանալի որոճողդ. երկրապագեմ, զի բարձ-
ցես զլուծ իմոյ յարկին² միշտ և յա-
րաժամ։

(Ի յեղիշերն սուրբ)։ — Պանծալի և լի
շափեղակապ³ և մարգարտահաւատ⁴ եղջիւր
կամարաձե, որ ունիս զաղբիւր օծման
իւղոյն. յորմէ օծան ոչ միայն օծեալըն ի
Մելքիսեդեկէ և որք յապա, (այլ) և աս-
տուած և տէրն քաղաքացն Դաւթի, պա-
րարտութեան ձիթովն և թափեալ անուամբ
իւղովն՝ զլուխն օծաւ միեղջերուն հզօր և
հորթու եղինն՝ որ վազէ ի վերայ լերանց
Բեթելայ և օծէ զիմանալեացն զպետսն և
հասանէ մինչև ի խորինս ամենայն անուա-

1. Յօր. այլ ի աստեղացն։ Բայց սիսաւ է,

2. Ուղդ. հարկին,

3. Շափիշղակապ։

4. Մարգարտայաշդ։

նակոչութեամբ, և կաթուած պարարակիդ
մ¹ պարարտութեան։ Զոր և պաշտելիդ ա-
ղաչեմ զնարպդ անտոչորելի՝ յօծման քո
պահեա զիս միշտ և յարաժամ։

(ի յերեսն սուրբ)。 — Ելեսօքդ չորիւրդ
և հողմարեր վարշամակօքդ զքօղ դատեր
նոր Սիովի փութապատառ և բոցակէզ
ցուցեր, և զեղեալ զծածկոյթ խաւարն և
զմբրիկն բոլորեալ՝ ի մետագս սանձեցեր,
և զտիպ քո ցանկական և տէրունական
նմանութեան՝ յերես հարսինն յօղեցեր,
գոլ խանդաղակաթ ի սէր և ի ինդիր ա-
նախտ փեսային. զոր ի կաթուածէ քոյ
պատկերիդ ցանկութեամբ շարժեալ բոլոր
էսկըս՝ ի նմանել աննմանոյն, որպէս ոմանք
որ զտիպդ առին և յարակայ ընդ էակիցդ
օրհնարանին։ Զոր և նոքօք մաղթեմբ առ
պարարակդ սուրբ՝ զերես ձեւիս իմոյ
կալ ի համբոյր փեսայիդ միշտ և յա-
րաժամ։

(ի շունչն սուրբ)。 — Տեսակաւ դիմացդ
և հարաւարեր շնչովքդ լինի փախուցեալ
հիւսիսականն սիգ. որթը սալարթազարդը
և տունկը խնկաբերը ի քէն շնչարերեալ՝

1. Գուցէ ամենայն։

անծախապէս բուրին. ձագք զարնանաթերք
և ծիծոռնք վճիռնաձայնք¹ ի ձայնելդ
վճիռն առեալ՝ զգարունն յաւիտենից ճչեն,
զոր մաճակալք և այգեգործք անկարացան,
առ ի կթել յերկնաթոփչ բարունակէդ՝ որ
երեր պտուզ զպարս աստեղացն և զգունդս
հրեշտակացն. զոր լծով քո սբանչելի և
լծակցովդ զարմանալի՝ առ զուր հնձանն
ժողովին և ճմլին ի ծոց մեծի արքային։
Զոր և համբուրելով իմ զցանկալի դէմսդ
սրբոյ եզինդ, զգարնանարեր և զկենդա-
նարար շունչդ՝ պահել առ իս (աղաչեմ)
միշտ և յարաժամ։

(ի ձեռն սուրբ)。 — Ի ծրարասէր ձեռնդ
տաշխից՝ առ հանգրէնս հարսին զարդու,
և ի ջահավառ մատունսդ անձաձրոյթ տա-
լոյն իլոյ². ի սեղանամեծար բազուկդ հիւ-
րասիրին Աբրահամու և որդւոց նորա. ի
մատունսդ հիփաթաձայն. առ զիրկդ զը-
գուասէր՝ առեալ մանկանն ի մէջ ա(ս)տենին,

1. Տեղիս աղերս ունի Գր. Նարեկացւոյ, Տաղին հետ
է Ա. Ղազար, ուր զրուած է.

«Տաւիդ եռաստովչ բաւեր զարնայնոյ,
Տաւիդապ(վ)աճիւ երգ զաւիեայ զուարձից »:

2. Յօր. կայ՝ տալոյն ի լոյս. սակայն համաձայն Առկ.
Սողոմ. զԼ. լԱ. 19. «Զմեռս իւր ձգէ յօզւու, և զմա-
տունս իւր անձանձրոյթ տայ իւոյ »:

և ի սպեղամնապատ թաթդ կիսամահին. ի քիւլդ և յափդ երկաթիւ և ծովաչափին, և առ թիզդ՝ հանուր էակացս քանակազմիտիդ, առ բազուկդ մշտատարած հանգոյն երկնից և բոլոր էակացս պատարագացն նուիրողիդ՝ երկրպագեմ, զի նուիրեսցես զիս ջեառնդ միշտ և յարաժամ:

(Առ ի յոտսն սուրբ կձղակին). — Եղեալ խարիսխ իմանալւոյ խորանինի վերայ պատուանդանի ոտիցդ, ուստի ցելեալ լոյսն զնա (զբնաւ) զծիրս աստեղացն, և հանճարագէտս առնէ լին և նորածին արքա(յա)ծնին. զոր ի բերել զկենաց փայտն և զնաւաստին՝ զգլուխն մահաբերին կճղակահերձ ջախէր, և նուիրէր հողեղինացն զողջակէզքն անզենլի, հաղորդեալս զենմամբ եզինդ՝ կճղակաւրս արար. առեալ զերինջն լընկէց՝ լծեալ ի լուծն քաղցրագոյն, և բեռամբ փոքրագոյն երկնավաստակս արար: Զոր և ճաշակելի սուրբդ աղաչեմ, պահել զիս պատարագելի անձամբ ի լուծ սիրոյ թիսուսի միշտ և յարաժամ:

(Առ արծիւն սուրբ և ի հողի). — Բաւ բուն նոր և անշարժ խորանաշինին և աննիւթ թելաց ոսկւոյն և արծաթոյն՝ մուաւոր և փոյթ թելամատոյց. և բոց փրձա-

նաց¹ վառեալ ի մէջ եղեգանն և ականցն, և ախտիւ ծերացելոյ անծերանալի հոգւոյն՝ մանուկ նորոգեալ, և թեօք արեգականն ալացեալ ի վեր, և սովացելոց ձագուցն աղաղակէին ի Տէր, և ի մարմինն սուրբ ժողովարալ պարու արծուեացն, և ձայն ցողարեր ծանօթ և լուսալիր նկատեալ ի բարձունս զարթուցեալ ննջեցելովք: Զոր և մազթեմ համբուրեմ զիմաստութիւնդ արագաթոփիչ՝ զարթուցանել ի տառապանաց զբոյ զանձն իմ, վերանալ և կալ առ քեզ միշտ և յարաժամ:

(Վասն արուոյն). — Գործնականի և անտանելի հողմոյ լին կրողիդ, չնչակապ և բոցայօդ գործնականացն վեհիցն՝ ի վերայ կացողիդ. ի թոփչս պաշտօնասէր աստեղացն՝ կէտ լուսաբաշխ, և շունչ պաշտելոյն ազդեցութեամբն. ի տարակոյսքն զալոյ հողմոյն՝ յայտնութիւն սաստիկ հնչմամբ, և վառեալդ առ ի սիրտ անկիզելի նամակաց, և (ի) ծփանս ծովու՝ թոչուն աւետարեր, և նաւ կենդանի՝ բարձեալ միշնողամբ, զոր աստղաճանանչ և հարաւաղէտ թեօքդ գոլով միշտ ժողովարան: Վասն ու

1. Ուղղելի է՝ փրկանաց, կամ փորձանաց:

ըոյ և զպատուելի զթեսդ սուրբ աղաչեմ,
թռուցեալ զիս ի խորոցս՝ և յանապատդ
սիրոյ ինձ դաղարել միշտ և յարաժամ:

(Առ շունչն սուրբ). — Եսայեատես և
մարգարէադէտ հրաշիցն՝ վերացեալ հողմն
և ծուխ ազգարար, և յանգոյէ ծնեցելոցն
ի յընթացմն զիսաւոր, և ամպեղէն թեօքդ
ստինց բազմալեզուր յամենայն դիմաց, և
առ հանդերձեալ զոյութիւնսն՝ անախտ
սերմն, և բիւրաւոր անուամբք պարուրեալք
ի ներքոյ ստեղծամէր թեփէ որպէս յան-
թարթելի և յանցուն բարցդ խորու, և մահու
արձանքն կապարեայ ծնան ի յարտեա-
նունսդ լուսոյդ: Զոր և պաշտելի զերկնա-
սերդ աղաչեմ, զիս ծնանել ի յոյս կենդանի,
փառաւորիլ ի քէն միշտ և յարաժամ:

(Առ երեսքն սուրբ). — Լուսատու սրան-
չելապէս լերանցն՝ երեսքդ չորս, և հոլովս
աստեղացն հայելի կերպընկալ, բարբառ
ի փողոյն և պատգամաձայն հողմոյն շտե-
մարան անթերի, և համատարած լիճ
ջրոց յուսոյն՝ շաղալից և մշտակաթ. ևս
և հերք սուրբ և կիսագունդ, և ի հողեղէն
ի մահիճ տարրիս ճաշակ և որակ ճեմասէր
և ինքնաղարթոյց. ի յընծայս տասանորդաց
իփէ ծիսելի կնդրուկ, և մշտակէզ մորենի,

և նուէրք ինքնամատոյց: Որով մաղթեմք
առ դէմսդ նուէիրագործ՝ նուիրել զիս Տեառն
միշտ և յարաժամ:

Ի ծիրս կուանաց շըթիթ¹ շարեալ խօսուն
շափիւղայ, և հալուէ գոհար հանեալ ի
վիմաց, զոր ընդելուզեալ պսակն ի քարէ
պատուականէ. յոր և աչօքն զբուրոս
պսակէ առեալ՝ զոր ակն աննիւթ իմաստիք
զարդարեաց զհրեշտական, և զգարշապար
երկելեացս մոաց՝ կացոյց առ վէմդ երկ-
նաթոփիչս. և զորս ի խազդ գետոյդ՝ որ ի
վիմէդ զարբեալսն և զլուացեալսն՝ հանգու-
ցանէ ձագախառն երամօք ի յոստս ոսկե-
սաղարթս. Զոր և անձանձիր կալով թեօքդ-
երկնատարած ի շըթանցդ շնչարերեալ՝ և
զիս թռուացես առ վէմդ սուրբ միշտ և
յարաժամ:

(Առ մագիս սուրբ արծուոյն). — Կայենից
բնաւից անխզելի կապ կախման, մազիլ
և կնիք լուսապայծառ, և նուէրս պաշտելի
անձանձիր, հրեշտակացն՝ նախաշաւիդ օդա-
պատառ, ի քայլս գնացից աստեղացն
իմաստիցն՝ կարապետ լուսարաշին, և գար-
շապար ինքնաղարթ² ընդդէմ սաստկութեան

1. Թուի լինել՝ լորիդ:
2. Յօր. ինքնաղարտ.

Հողմոյն, արձակ իմաստից և բաժանման
ձայնիցն՝ քանուն և կշիռ լուսալիր, բազ-
մածոյլ և հողեղէն գնդիս՝ ծոցածին ծնող,
և յանկին Սաղիմայ՝ բոլոր ստինք մշտա-
բուխ ի խնդիր ունականացն¹ զմրխտից.
Կենդանի բազմածին, և առ հովանասէր
ծնունդսն՝ արմաւենի անթառամ: Զոր և
մաղթեմ առ արծիւդ բազմածին, պահել
ի շրթունս իմ զշունչդ² բազմասնունդ միշտ
և յարաժամ:

ԼՈՒԾՄՈՒՆԻ՞Ց

Աթոռոց էին մեկնութեանց արժան է
միտ դնել, և հասանել բանիցն՝ զոր ծա-
նուցանի ի սուրբ Հոգւոյն՝ տառիւս, յորմէ
սկսայց ցուցանել իմաստնոցն զաստուա-
ծային աթոռն՝ որ կայ ի վերայ չորեք
նախաներբողեալ կենդանեացն. և քառա-
պատկեր չորս կենդանիքս կան ի վերայ
վեց խառնուածոցս, որք են այսոքիկ. մին՝
զոր ասեն. « Ահա հողմն վերացեալ զայր
ի հիւսիսոյ ». երկու՝ « Եւ ամազ մեծ ի

1. Ուզդ, սռեականացն:
2. Յօր. ի շունչդ:

նմա ». երեք՝ « Եւ լոյս շուրջ զնովաւ ».
չորս՝ « Եւ հուր փայլատակեր ի նմա ».
հինգ՝ « Եւ ի միջի նորա որպէս զտեսիլ
բազմազունի ականց ». վեց՝ « Եւ ճառա-
գայթք ի նմա ». զոր և Տէր հրաշիցն
յայտնեսցէ և մեզ զՃմարիտն առ ի ճառել
միշտ և յարաժամ:





ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԷՆ

Յթ. Ա.

| | |
|---|-------|
| ՍՈՐԳԻՍԵԱՆ (Հ. Բարսեղ), - Ազաթանը գեղոս և իւր բազմագարեան գաղտը նիվը | 4 — |
| — Քննադատութիւն Յովհ. Մանդա- կունոյ և իւր երկասիրութեանց վրայ. 3 — | |
| — Քննադատութիւն Հին Կոտակարանի անվաւեր գրոց վրայ | 4 — |
| — Ախանիա թարգմանիչ և իւր գրական գործոց նմոյշները | 1, 50 |
| — Մայր ցուցակ Զերագրաց Մատենա- դարանին Միսիթ. Հարց ի Վենետիկ, Ա. Հա. | 40 — |
| — Փամանակագրութիւն Ան. Շիրա- կացւոյ, Վենետիկ 1904 | 1, 50 |
| — Միսիթարան Միաբանութեան Երկ- հարփւրամեայ գրականական գործու- նէութիւն և Նշանաւոր գործիշներ, Վենետիկ 1905 | 6 — |
| — Վարք և մատենագրութիւնք Սրբոյ Հօրն Եւագրի Պոնտացւոյ, Վենետիկ 1907 | 10 — |
| — Անեցի Վարդանայ Վարդապետի Եր- գելիկ Վասն Կառաց Աստուածութեան Ներքոյ, Վենետիկ 1919 | 0, 50 |

IL. 9.

Nº 4803